

ԲՆԱՋՆԱՅՈՒՈՂ ՏՆՃԻՆԱՆՈՒՄԸ

Դարձեալ արեւն և գոհեր... Դարձեալ մարդկային մարմինը ողջակէզ մոլորանդութեան սեղանին:

Նորէն գոյժ ու կական հայ որդեկորոյս մայրերի... Նորէն վայրագ բռնաբարութիւններ մարդու... հայ Դիւանաների: Վերջապէս... անվերջ սարսափներ այն անիծեալ երկրում, որ սպանդանոց է դարձել հայ տարրի համար: Անհատնում ահաբեկուններ այն երկրում, որի երկինքը ականատես է շարունակ ամօթի, անարգանքի և անյուր խայտառակութեանց պժգալի տեսարաններին: Մի կատարեալ սանդաղամետ, որ ընդունակ է ստեղծելու տաճկական մարդասոշոշութիւնը միայն:

Եթէ իշխելու լինէր այն տեղ Մեծ Մարդասպան կամ անիծապարտ Համիդը, թերեւ մեզ խորթ չերեար վերստին հայ մարդու իբրեւ գուարակ գոհի սեղան հանուելը:

Այնտեղ չորս տարուց ի վեր ծածանում է ազատութեան, հաւասարութեան և եղբայրութեան Դրօշը, բայց այնպէս այդ Դրօշի ծածանման օրերում ևս չեղաւ վերջ ու վախճան հայ մարտիրոսագրութեան: Ահա այդ է մեզ անհասկանալին... ահա այդ է մեզ անտանելին:

Մենք նոր օրեր և տանելի կացութիւն էինք սպասում ներկայ բարեմիտ սովորների գալիսին: Ներքոյ... Սակայն հիասթափուած ենք՝ ճակատագրական տեսնելով հին Թիւրքիոյ յաճառ գոյութիւնը նորի օրերում ևս: Անուններ են միայն այնտեղ փոխուում. հողին նոյնն է, մարդիկը հին, ընթերցան անփոփոխ, մարդկայնութիւնը չհասկացուած, արդարութիւնը հալածական, իսկ պաշտաման առարկայ՝ հեղեղատօրէն ամեն ինչ քանդող և կործանող Օսմանցիացուով: Եւ հայը միայն զոհ այդ դաժան ու անմարդասէր գաղափարին:

Դժբաղդ Տաճկահայեր...

Ինչո՞ւ գերադասեցիք իբրեւ ազնիւ տարր՝ Հաւասարի մնալ «նորագունացած» Օսմանեան կառավարութեան, երբ նա այդ հաւասարութիւնը յանցանք և պատժարժան է համարում:

Ինչո՞ւ Ալբանիների, Մալիսիների և Միլիթիների նման դուք ևս զէն ի ձեռին չխոյացաք բռնաւորների վրայ, որպէս զի գուրգուրար ձեզ Բ. Դուռը, որպէս զի յարգէր ձեզ Եւրոպան:

Աղերսողներին, թագրիւրներին լեզուով խօսողներին արհամարում են, լաւագոյն դէպքում՝ միայն «խոստանում» ձեռնարկել «կտրուկ միջոցներ»-ի իսկ սուր մերկացնողներին զիջումներով ընդառաջում: Կենսունակ և ազատասէր ժողովուրդները բռնում են վերջին ուղին՝ փոխան խօսքի փամփուշտների՝ թէ «ինքնապաշտպանութեան կղիմենք»:

Ինչ սրբութիւն մնաց այնտեղ, որ չպղծուէր բարբարոսօրէն:

Արդէն լիկուններ և հարստահարութեանց չափն անցաւ զանցաւ: Խիղճ՝ անարգուած, կրօն՝ հայոյուած, քրիստոնէութիւն՝ արհամարեալ, պատիւ՝ արատաւորուած, կուսութիւն՝ անանորէն բռնաբարուած, հայրենիք՝ ծուէն-ծուէն, մարդկային արժանիք՝ անհունօրէն ցեխոտուած, հայութիւն՝ ջախջախ և մերձի մահ... Ահա սահ-

մանադրական Օսմանեան պետութեան շնորհն ու բարեքը դէպի մեր արեւնակիցները:

Այս բոլորից վերջ ո՞վ մեղադրող ըմբատացողին... ո՞վ դատապարտող բողոքողին և կիսալուծանի պետութիւնից երես դարձնողին:

Մենք դեռ սպասում էինք, որ իրերը լաւագոյն կերպարանք կստանային այնտեղ, սակայն մերկ իրողութիւնը եկաւ վերջին անգամ հաւաստելու, որ այլեւ ոչինչ սպասելիքներ չենք կարող ունենալ այն պետութիւնից, որ ինքնին ամենայն յամառութեամբ դէպի կործանումն է գնում, որ ջարդն ու աւերը իրեն իդէալ է դարձրել և համարդկային արարքները՝ հռչակ պարծանաց:

Մենք այլ եւս ձանձրացանք... և չենք հաւատում ոչինչ խոստումներին, որ տրոււմ և անգամ «հաւատարմացում» են Տաճիկների կողմից: 300,000 անփոխարինելի գոհերից և Ատանայի 30,000 հայերի անմոռ ողջակիզից աւելի նուիրաբերութեան՝ անկարող ենք անել Տաճկական խոստարտութեան: 1)

Մինչ քաղաքակիրթ մարդկութիւնը հետամուտ է նորանոր գիտելիքի, օգն ու ջուրը խաղաղութեան, անդին Մեծ Տաճիկը շարունակում է մընալ նոյն անկուտուրական տարրը և հայի մորթոտումների մէջ է որոնում իւր հօգուտիւնն ու խախտանքը:

Այն պետութիւնը, որ դիմանում է Իտալիոյ նման գիտական և ռազմական պաւելութիւններ ունեցող մեծ պետութեան ծանր հարուածներին, զարմանալի է, որ «չի կարողանում» զսպել-սանձադաբել զանազան աւազակ Միւր Մհէների և արեւն ծարաւ աւատակներին, որոնք գեհնի են վերածել Անատոլիոյ և մի փառաց պսակ բոլորել այս դժոխային կացութեան հեղինակ Իտալիայի ճակատին:

Այս նշանակում է, որ հայը Տաճկաստանում դրուած է օրէնքի և արդարութեան սահմաններից դուրս:

Երբ այդպէս է, ապա մեզ մնում է հնարաւոր և ներելի սահմաններում՝ դիմել միջոցների թեթեւեղեղութեամբ տառապանքները մեր արեւնակիցների, որոնք հալում ու մաշում են Տաճկական անվերջ բռնութիւններից:

1) Պարսկահայերս, որ վաղուց վայելում ենք մեր կառավարութեան քաղցր խնամքն ու անուրանալի պաշտպանութիւնը, պարտականութիւն ունինք դիմելու նոյն մեր այդ կառավարութեան և խնդրելու, որ նա Պարսկահայերիս բողոքը յայտնէ Տաճիկ կառավարութեան՝ հայերի կրած տառապանքների առթիւ:

2) Ապա յարմարագոյն ժամանակն է, որ Թաւրիկի հայութիւնը շտապով գումարի միտինգի մի բողոք և խոնարհ դիմումն անի հանուրց Հայոց Հովուապետին, որ նա, իբրեւ ամենայն Հայոց ծայրագոյն հոգեւոր Պետ, յանուն Պարսկահայ ժողովրդի ևս դիմէ Ռուսական մեծագոր կայսեր և յանուն մեր հայցէ նորին Մեծութեան բարձրագոյն միջամտութիւնը օր աւուր ծուռաւորող Տաճկահայերի համար: Նրման բողոքի միտինգներ պէտքէ կազմեն Պարսկաստանի այլ վայրերի հայ-

1) Այս վերջին տարւումն էլ Իտալիայի կառավարութեան օրօք՝ մասնակի ջարդուած հայերի թիւը, ըստ Կովկասեան թերթերի տեղեկութեան, անցնում է 3000-ից:

երը ևս:

Չկորցնենք յարմար բոլորէն վերացել է արդէն Ռուսների և Անգլիացիների միջից երբեմնի հակամարտութիւնը: Մեծն Բրիտանիան, մարդասէր Պրանսիան, անշուշտ, այժմ իրենց կողմից կնպաստեն բոլոր այն միջոցներին, որոնցով արեւելեան քրիստոնեաների աւանդական պաշտպան Մեծ Ռուսաստանը կփութայ մի իրական դարման տանել բազմատանջ Տաճկահայերի դժբախտ կացութեան:

Տաճկական քնացնող խոստումները, քրդերի սանձարձակ վայրագութիւններն ու անպատիժ մնալը, ահա ուղքեր և ինչեր հիմնովին խախտեցին մեր հաւատն ու վստահութիւնը դէպի Օսմանեան կառավարութեան բարեմտութիւնը:

Իրա փոխարէն մենք լի հաւատաւով նայում ենք դէպի հիւսիս, դէպի Պետրոս Մեծի հօր շառաւիղը, որ որպէս իւր նախորդներն անցեալում, նոյնպէս և ինքը ներկայումս օգնութեան հասնի վերջ ու վախճան դնելու քրիստոնեայ ու կուլտուրական հայ ժողովրդի ջարդերին, զորս քաղաքական նպատակ է դրել իրեն Տաճիկ կառավարութիւնը: Առանց արտաքին ճնշման կամ միջամտութեան մեզ այլ ևս անհաւատալի է թւում տանելի կեանքն ու յաւէտ խոստացուող և բընաւ չիրականացող ըէֆօրմը Տաճկաստանում: Ահա թէ ինչո՞ւ մենք Պետերբուրգ ենք նայում:

Մենք մեր կողմից անյեւաձգելի միտինգի առաջարկը արինք. յուսով ենք մեր ազգային իշխանութիւնը-առաջնորդարանը- ևս կփութայ իր կողմից այդ նախաձեռնութիւնը իր վրայ վերցնել և այս մօտիկ օրերում կանչել ընդհանուր մի ժողով, ուր մշակուած, յարմար և կաթուղիկոսին ուղարկելիք մի բանաձեւով մեր հասարակութիւնը ևս կգայ ոյժ տալու ընդհ. հայութեան նման բողոքներին, որոնց իրականացման համար մեր աչքերը ուղղուած են դէպի էջմիածին և դէպի Պետերբուրգ:

Յուսալի է, անշուշտ, որ մեր աւանդական անտարբերութիւնն այս անգամ մի կողմ կդնենք և, եթէ ոչ ինքնաբերաբար, գոնէ հէնց առաջին հրաւերին կփութանք ժողովարան՝ ազդուապէս արտայայտուելու Տաճկական բռնութեանց դէմ՝ ապացուցանելու, որ մենք ևս վշտակից ենք արեւն լացող մեր եղբայրների անյուր տառապանքներին:

Դէպի ժողով, քաղաքացիներ և բոլոր հոսանքի մարդիկ, դէպի գործ և գործնական նպատակներ, որ այլ ևս հայ երկինքում լուսինը չտեսնէ ամօթի գործեր և չսենք այլեւ հայի հառաչը իւր հայրենի հողից: 2)

Ա. Տ. Վ.

Խմբագիր-հրատարակիչ՝

Ա. Տ. Վարդանեան

2) «Միտք» № 30-ը լոյս կտեսնի Հոկտ. 6-ին: Այսպէս ուշանալու պատճառը մեր թէ քաղաքիս և թէ հեռաւոր բաժանորդների «բարեխղճութիւնն» է: Մենք, հակառակ մեր յաճախակի դիմումների, թէ ևս արդէն 9-րդ ամիսն է, չկարողացանք 14-20 դոանի չնչին բաժնեգները ստանալ: Այսպիսով մեր բաժանորդները մեզ մասնեցին զգալի ֆանսների և խոռո պարսֆերի: Յուսով ենք մինչև երկուշաբթի մենք կարող կլինինք կանոնաւորել մեր թերթի ֆինանսականը և ապահովել նրա յաւրատե և անխափան հրատարակութիւնը:

Խմբ.



